

«ՍՏԵՄ ԱՐՄԵՆԻԱ» ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Առաջին փուլ

Մայիսի 10, 2026

Բացահայտեք ձեր ստեղծագործական մտածողությունը
ու մտավոր կարողությունները



1. Մրցույթը

«ՍՏԵՄ Արմենիա | Մայիս 2026» մրցույթը բաղկացած է վեց քննադատական մտածողության առաջադրանքներից, որոնք պետք է լուծվեն չորս ժամվա ընթացքում: Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի միջին և ավագ դպրոցներում սովորող 13-ից 18 տարեկան աշակերտները (18 տարեկանները կարող են մասնակցել միայն այն դեպքում, եթե դեռ չեն ավարտել դպրոցը): Պատասխանները պետք է ներկայացվեն մրցույթի օրը մինչև ժամը 14:05-ն [այս հղումով](#), **Մասնակցել** ներդիրի տակ:

2. Առաջադրանքներ

Առաջադրանքներն ունեն տարբեր աստիճանի դժվարություն՝ 1-ից 5 բալային սանդղակով: Առանձին առաջադրանքների միավորները նշված չեն, բայց բոլոր վեց առաջադրանքների ընդհանուր միավորը 20 է: Մասնակիցները կարող են մասնակի միավորներ ստանալ, եթե լուծումը կամ բացատրությունը թերի է: Անպայման ավելացրեք բացատրություններ, հակառակ դեպքում լիարժեք միավորներ չեք ստանա:

3. Արհեստական Բանականության (ԱԲ) Օգտագործումը

“ՍՏԵՄ Արմենիա” մրցույթների առցանց ձևաչափը մասնակիցներին հնարավորություն է տալիս օգտվել բազմազան ռեսուրսներից, այդ թվում՝ ԱԲ չաթբոտներից: Թեև ԱԲ օգտակարությունը բազմաթիվ հարցերում անհերքելի է, բարդ հարցումների դեպքում դրա արդյունքը հաճախ կարող է սխալ լինել: Մենք ձգտում ենք ստեղծել այնպիսի առաջադրանքներ, որոնք պահանջում են անհատական մտածողություն ու հետազոտական հմտություններ: Կարող եք վստահությամբ նշել որ ԱԲ-ն լուծումների ուղղակիորեն պատճենումն ու տեղադրումը հեշտությամբ կբացահայտվի:

4. Տեխնիկական Նկատառում

Մենք քայլեր ենք ձեռնարկել մրցույթի սահուն տեխնիկական գործընթացն ապահովելու համար: Պատասխաններ մուտքագրելու հետ կապված հնարավոր խնդիրները նվազագույնի հասցնելու համար մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել համակարգիչ կամ պլանշետ, այլ ոչ թե հեռախոս: Եթե բախվում եք տեխնիկական դժվարությունների, փորձեք օգտագործել **մի ուրիշ վեբ դիտարկիչ (բրաուզեր)**: Խնդրում ենք նկատի ունենալ, որ մենք չենք կարող անհատական տեխնիկական աջակցություն տրամադրել:


5. Զգուշացում

Լուծումները ներկայացնելիս դուք երաշխավորում եք, որ հանդիսանում եք դրանց հեղինակը: ՄԻ ԿԻՍՎԵՔ ձեր լուծումներով մրցույթի այլ մասնակիցների հետ, հակառակ դեպքում կորակագրվեք:

ԱՌԱՋԱԴՐԱԼՔ #1

ԲԱՌԱՄՊ

Ո՞ր քաղաքի անվանումը չպետք է լինի այս ցուցակում:



Հեղինակ՝ Ա.Մարտիրոսյան

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #2

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Արտավազդի հոր ինսուլինը վերջացել է և նա պետք է մարզկենտրոնից դեղորայքը բերի չորս ժամվա ընթացքում, հակառակ դեպքում հոր վիճակը կվատանա: Մարզկենտրոն տանող ճանապարհն ամբողջությամբ բաղկացած է վերելքներից և վայրէջքներից: Արտավազդի մոտոցիկլը բավականին հին ռուսական մոդել է, որը յուրաքանչյուր 10 կմ-ի համար սպառում է 2 լիտր բենզին: Այն կարող է բարձրանալ վերելք 15 կմ/ժ արագությամբ և իջնել 30 կմ/ժ արագությամբ: Քանի՞ լիտր բենզին է անհրաժեշտ Արտավազդին ամբողջ ճանապարհը առանց վերալիցքավորելու անցնելու համար:



Հեղինակ՝ Ս. Արաջյան, պատկերը՝ Nano Banana

ԱՌԱՋԱԴՐԱԼՔ #3

ԵՐԼԱՆՅԱՆ ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐ

Այս խորհրդանիշները կատարում են հետևյալ գործողությունները.


◆	հանել 2
⬡	կրկնապատկել թիվը
◇	փոխել թվանշանները տեղերով (օրինակ՝ 29 => 92)
★	թվին ավելացնել իր թվանշանների գումարը

M-ը և **N**-ը երևանյան երկու ավտոբուսների համարներն են: Եթե հետևյալ հավասարումը ճիշտ է, որքա՞ն է **N** ավտոբուսի երթուղու ընդհանուր երկարությունը կիլոմետրերով:

$$M \diamond \diamond \square \star = N \diamond \star \square \diamond$$

Հայտնի է, որ **M** ավտոբուսը **S1** փողոցից գնում է **S2** փողոց, որտեղ


- **S1** փողոցը կոչվել է մի երկրի մայրաքաղաքի անունով, որը նշանակում է «չաբաթվա առաջին օրը», չնայած այն երեսուներկու տարի կրել է խորհրդային «պողպատյա մարդու» անունը:
- **S2** փողոցը կոչվել է ռուսական Եպիկական մի վեպի անունով, որը համարվում է 20-րդ դարի գրականության ամենանշանակալի ստեղծագործություններից մեկը, և որը արժանացել է գրականության Նոբելյան մրցանակի:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #4

ԹՎԱՇԱՐ

Ի՞նչ թիվ է թաքնված հարցական նշան պարունակող շրջանակում:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #5

ԼՈՒՍՆԱՅԻՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ

Ի՞նչ կոպիտ սխալ է թույլ տվել այս ֆուտուրիստական [տեսանյութի](#) հեղինակը:



Հեղինակ՝ Ա.Մարտիրոսյան. Տեսանյութը՝ FlowMusic.ai

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #6

ԱՐՋԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԱՅԾԸ

Ֆերմեր Փանոսը գրանցվել է Վանաձորում անցկացվող «Արիեստական բանականության կիրառումը գյուղատնտեսության մեջ» խորագրով հնգշաբաթյա ինտենսիվ դասընթացի: Ուսման վարձի և կացության ծախսերը հոգալու համար Փանոսը ստիպված էր վաճառել իր միակ կովը: Նրան մնացել է միայն մեկ այծ, որին նա որոշեց կապել իր քառակուսի ֆերմերային տան անկյունին, որի կողմերը 10 մետր են: Տունը շրջապատված է խոտածածկ դաշտով, և Փանոսը գիտի, որ այծին օրական 31.4 քառակուսի մետր մակերեսով արոտավայր է պետք սնվելու համար:

Որքա՞ն պետք է լինի այծին տանը կապող պարանի նվազագույն երկարությունը, որպեսզի խոտի պաշարը բավարարվի ուղիղ հիսգ շաբաթ՝ և ոչ մի օր ավելի:



Հեղինակ՝ Ա.Մարտիրոսյան, պատկերը՝ Nano Banana